

սարդ լինէի» — կ'ըսէր օր մը հառաչելով: Ուրախ էր հայկական ամէն մի յաջողութեամբ եւ խորապէս կը վշտանար, երբ հայերու մասին գէշ բան մը կը լսէր: Ո՛րքան ցաւեցաւ, երբ Իտալիոյ թերթերը օր մը հրատարակեցին, թէ Միլանի ամենէն հարուստ հայը, Գիլսիզեան սնանկ յայտարարուեք էր եւ բանտ նետուեք:

Ուրիշ անգամ, կովկասցի հայ մը, Նիկողայոս Ղուկասեան անուճով (Գանձակեցի) կ'երթայ ծերունու քով եւ կը հաւատացնէ թէ մեծ գիւտ մը ըրեր է, աշխարհադրոք գիւտ մը, կ'ուզէ թագաւորին ներկայանալ, կ'ուզէ փորձեր ընել պետական արհեստանոցներում եւ այլն: Ու կը խնդրէ մեծ հայասէրին աջակցութիւնը: Լուցցատտի ժողով կը գումարէ իր տան մէջ եւ կը կանչէ Իտալիոյ մեծագոյն ֆիզիկոսը: Վերջինը իր տունը կը հրաւիրէ Ղուկասեանը, կը քննէ անոր յաւակնութիւնները եւ կը յայտնուի որ մարդը պարզ արկածախնդիր մըն է, մեծամոլութեան ախտով բռնուած, որ կ'ուզէ իր անունը հռչակել առ համաշխարհային մամուլի մէջ...

Ղուկասեանէն յետոյ ուրիշ հայ մը երեւան կուգայ Հոռմի մէջ, «գիւտնադիտական» ներկայացուցչի պաշտօնով եւ կ'երթայ «մշակելու» Լուցցատտին... կը հաւատացնէ անոր, թէ Հայաստանի բուն ներկայացուցիչը Հոռմի մէջ ինքն է եւ ոչ Վարանդեանը, որը միայն «Երեւանի հանրապետութիւնը» կը ներկայացընէ...

Երիտասարդ մը, խիստ եռանդոտ ու լեզուանի, որ երկար տարիներ ծառայեր է արտասահմանեան թիւրք հիւպատոսարաններու մէջ: Եւ նա ամիսներով կը դեգերի Լուցցատտի շուրջը:

Սեղձ ծերունին, որ սիրով կ'ընդունէր ու կ'ունկնդրէր ամէն մի հայու, շուարումով կը լսէ հայութեան այդ տարօրինակ պատուիրակի յայտարարութիւնները: Կարող էք երեւակայել անոր վիշտը... Եւ օր մը դառնութեամբ ըսաւ ինձի.

— «Կը տեսնամ, որ թիւրքահայ եւ ռուսահայ չէք սիրեր զիրար»...

Որքա՛ն է տառապէր հայ չարչրկուած ժողովրդի դատը պոլսական բարձրով սնուած կարգ մը հայերու շնորհիւ... Բաւական չէ,

որ անոնք միշտ խտրական վերաբերմունք ցըցուցին դէպի կովկասահայ հատուածը, — օտարներու առջեւ ալ չէին վարաներ քրքահայի եւ ռուսահայի խնդիր հանել... Սնդիր մը՝ որ այժմ ալ պարբերաբար հրատարակ կը նետուի, ի փոռս հայ ժողովուրդի ու հայկական դատի... Սնդիր մը՝ որ պարկեշտ մարդկանց կարծիք մը չէ, տեսակէտ մը չէ, այլ պարզ ոճիր մը...

Ի՞նչ պատասխանէի մեր մեծ բարեկամի այդ կշտամբող դիտողութեան: Վիշտն ու ցատուճը կը համակէին զիս, բայց կ'աշխատէի դուստ մնալ: Ծերունին, սակայն, կը շարունակէր.

— «Գիտեմ, անշուշտ, պաշտօնապէս Իտալիոյ կառավարութեան մօտ դուք էք նշանակուած Հայկական Հանրապետութեան ներկայացուցիչ եւ Իտալիան ալ Երեւան է զրկեր իր ներկայացուցիչը մինիստրի տիտղոսով: Գիտեմ, դուք հոս դիւանատուն մըն ալ ունիք եւ անցագիրներ կուտաք հայ քաղաքացիներուն... բայց այդ երիտասարդը, որ ինձի ներկայացուց Պարիզի Պատուիրակութեան տուած վաւերագրերը, կը պնդէ, թէ ինքն է թրքահայութեան օրինաւոր ներկայացուցիչը, թէ Երեւանի Հանրապետութիւնը ոչ մի առընչութիւն չունի թրքահայութեան հետ... Իսկ ինչ կը վերաբերի անցագիրներուն, կըսէ, թէ իր Պատուիրակութիւնն ալ իրաւունք ունի անցագիրներ տալու թրքահայ քաղաքացիներուն»...

Եւ երկար ամիսներ տղան նոյն անընկճելի եռանդով իր «հարազատ ներկայացուցչութեան» հանգամանքը կ'արծարծէր Հոռմի քաղաքական շրջաններում. — եռանդ մը՝ որ արժանի էր աւելի լաւ գործադրութեան: Մեղաւորը չի հարկէ, ինքը երիտասարդը չէր, այլ այն չարաշուք երկուութիւնը (dualisme), որ սոճապատէպ երեւան կուգար կովկասահայերու եւ պոլսատիպ թիւրքահայերու յարաբերութեանց մէջ, վնասելով ընդհանուր հայկական դատին: Այդ իրողութեան շնորհիւ, Հոռմի մէջ ատենօք երկու հայ դեսպան կար (թո՛ղ թէ մէկը ճանչցուած, միւսը ոչ...): Բան մը՝ որու նմանը, անշուշտ, չէք գտներ որ եւ է ուրիշ ժողովուրդի պատմութեան մէջ: Եւ հայ դատի սպազայ պատմադի-